ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 26-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

ՀԱՍՏԱՏԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՕՐԱԿԱՐԳԸ:

1. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՐԲՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
5. << ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՎԱՀԱԳ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԴ
3. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
4. ՏՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՔԱՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԳԶԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 27-Ն

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի հանրապետության « Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 20-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի պահանջներով, ավագանին որոշում է՝

Հաստատել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՎԱՀԱԳ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԴ
3. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
4. ՏՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՔԱՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԳՋԻՐՅԱՆ

Հավելված 1
Դարբնիկ համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 24-ի
N 27-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Դարբնիկ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:
2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Դարբնիկ համայնքի ավագանու որոշումը:
3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:
5. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:
6. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում են Դարբնիկի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետը:

III. Աղբահանության վճարի հաշվարկումը

7. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝

1) բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար՝ փաստացի բնակվող անձերի քանակով,
2) այլ շենքերի կամ շինությունների համար՝ ըստ արտադրվող աղբի ծավալի կամ զանգվածի՝ Դարբնիկ համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերի սահմաններում:
8. Սույն կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝
1) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 20 դրամ
2) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ - 5 դրամ,
3) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 2 դրամ
4) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի բազմաբնույթ տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով: Աղբահանության վճար վճարողի պահանջով (դիմումով) կարող է կատարվել վերահաշվարկ՝ ըստ շինության փաստացի նպատակային օգտագործման (չափերի, քմ) տեղեկությունների տրամադրման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Տվյալ դեպքում աղբահանության վճարը հաշվարկվում է ըստ փաստացի նպատակային նշանակության օգտագործման չափերի:

IV. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը

9. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը իրականացնում է Դարբնիկի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետը, կամ այլ կազմակերպության /կազմակերպությունների/ կողմից՝ այսուհետ՝ գանձող:
10. Գանձողը ստանում է Դարբնիկի համայնքապետարանի կողմից տրամադրված՝ աղբահանության վճարի կանխիկ գանձման համար նախատեսված անդորրագրերը, որի համար Դարբնիկ համայնքի ղեկավարի և գանձողի միջև կնքվում է անդորրագրերի հանձնման և ընդունման արձանագրություն:
11. Համակարգողն իրականացնում է գանձողի կողմից գանձված անդորրագրերի ընթացիկ հաշվառման, համադրման, անդորրագրերի մնացորդների և հայտի դեպքում՝ անդորրագրերի նոր խմբաքանակների տրամադրման աշխատանքները:
12. Գանձողը համակարգողից ստանալով անդորրագրերը, իրականացնում է անդորրագրերի պահպանման և ընթացիկ հաշվառման այլ աշխատանքներ:
13. Գանձողը պարտավոր է տվյալ օրվա գանձված գումարը մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 16.00-ը բանկային կամ փոստային համակարգի միջոցով գումարը փոխանցել համապատասխան հաշվին, իսկ անդորրագրերը՝ մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը, մուտքագրել տվյալների հաշվառման շտեմարան: Գանձված անդորրագրերի երկրորդ օրինակը՝ համապատասխան ամփոփագրով, գանձողը պարտավոր է հանձնել համակարգողին՝ մինչև գանձված գումարի փոխանցման

օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15.00-ն:

14. Աղբահանության վճարի հաշվառման և գանձման լիազորություններով օժտված աշխատակիցը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների /հաշվետվություն/ վերաբերյալ:

V. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

15. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

16. Աղբահանության վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

VI. Այլ դրույթներ

17. Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Դարբնիկ համայնքի ղեկավարի կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԳՋԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 28-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ, 14-րդ հոդվածների պահանջներով, ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման//բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. Ոչ հիմնական շենքերի և շինությունների տեղադրման համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ.

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի /թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ,ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնվեց հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հարյուր հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնվեց հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հարյուր հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համայնքի վարչական տարածքում«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ մեկ քառակուսի մետրի համար.

9) Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին /սաունաներին/ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. բաղնիքների /սաունաների/ համար՝ հինգհարյուր հազար դրամ.

դ. խաղատների համար՝ մեկ միլիոն դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հիսուն հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հիսուն հազար դրամ:

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ:

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակու-

թյան ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.

բ. թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ;

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ երեք հարյուր յոթանասունհինգ դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ հարյուր հիսուն դրամ:

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները /զինանշան, անվանում և այլն/, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ:

13) Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տաս հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

2. Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերին կիրառել 0.5 գործակիցը:

3. Հայաստանի Հանրապետության Դարբնիկ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝

համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.

6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար՝ յուրաքանչյուր ամսվա համար՝

ա. փաստացի բնակվող յուրաքանչյուր անձի համար 100 դրամ.

բ. առևտրի, այդ թվում՝ շուկաների, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝ 1 քմ 20 դրամ.

գ. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ 5 դրամ.

դ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և այլ շինությունների մասով՝ 1 քմ 2 դրամ.

7) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ յոթ հազար դրամ.

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հազար դրամ փոխհատուցման վճար:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՎԱՀԱԳ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԴ

3. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

4. ՏՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

5. ՔԱՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԳՋԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 29-Ն

2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի պահանջներով, ավագանին որոշում է՝

1. Հաստատել համայնքի ղեկավարի աշխատավարձը՝ 230.0 հազ. դրամ:
2. Հաստատել համայնքապետարանի աշխատակազմի և Դարբնիկի մանկապարտեզի աշխատակիցների քանակը,հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՎԱՀԱԳ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԴ
3. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
4. ՏՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՔԱՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԳԶԻՐՅԱՆ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Դարբնիկ համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 29-Ն որոշման

ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԴԱՐԲՆԻԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը՝ 15
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)	Հավելավճար (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար		230.0	
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	105.0	
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	160.0	3.0
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	130.0	
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/3.2-1/	1	110.0	
ՏԵԽՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
Օպերատոր	1	105.0	
Պահակ	1	73.8	
Հավաքարար	1	73.8	
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ			
Գրադարանավար	1	79.1	
Մանկապարտեզի տնօրեն	1	140.0	
Դաստիարակ	1	120.0	
Դաստիարակի օգնական	1	79.1	
Խոհարար	1	73.8	
Հաշվապահ	1	79.1	
Ցերեկային դոնապահ	1	73.8	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԳԶԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 30-Ն

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՐԲՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի դրույթներով, Դարբնիկ համայնքի գլխավոր հատակագծին և զոտիավորման սխեմային համապատասխան և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի բնակելի կառուցապատման և գյուղատնտեսական այլ հողատեսքի հողերն օտարել աճուրդային եղանակով:
2. Հաստատել հողամասերի լոտերը և մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի:
3. Սույն որոշումն իրականացնել առաջիկա երեք ամսվա ընթացքում:

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /հա/	Նպատակային նշանակությունը	Հողատեսքը	Գործառնական նշանակությունը	Մեկնարկային գինը /հազ. դրամ/	Սահմանափակումներ
1	բնակելի կառուցապատում	գ. Դարբնիկ	03-036-0023-0032	0.12903	բնակավայրերի	բնակելի կառուցապատում	բնակելի կառուցապատում	681280	Չունի
2	այլ հողատեսքեր	գ. Դարբնիկ	03-036-0003-0014	0.20431	գյուղատնտեսական	այլ հողատեսքեր	այլ հողատեսքեր	11750	Չունի

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՎԱՀԱԳ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԴ
3. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
4. ՏՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՔԱՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԳԶԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 31-Ա

«ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով համայնքապետարանի ֆինանսական հնարավորությունից և ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, ավագանին որոշում է՝

1. Ս/թ դեկտբերի 1-ից մինչև 2018 թվականի մարտի 1-ը դադարեցնել Դարբնիկի մանկապարտեզի աշխատանքային գործունեությունը:
2. Հարկադիր պարապուրդի ժամանակ վճարել օրենքով սահմանված կարգով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՎԱՀԱԳ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԴ
3. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
4. ՏՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՔԱՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԳԶԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 32-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, ավագանին որոշում է.

Դարբնիկ համայնքի 2017 թվականի վարչական բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել փոփոխություններ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգման.

Պակասեցնել՝

11.1.2 Պահուստային ֆոնդի

4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից 50.0 հազ. դրամ և այն ուղղել

01.1.1 Օրենսդիր և գործադիր մարմնի

4252 /ընթացիկ նորոգում/ հոդվածին 50.0 հազ. դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՎԱՀԱԳ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԴ
3. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
4. ՏՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՔԱՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԳՋԻՐՅԱՆ